



ԺԼ ՏԱՐԻ . ԹԻՒ 11

1860

ՆՈՅԵՄԲԵՐ 1

Առաջինի ու Քաղաքակիրք պատաճի : (Ճես երես 29)

ԿԵ

Կատարել զպարտս սեփական վի-
ճակի :

Չէ, ես ինձմէ աւելի հարուստին
վրայ չեմ նախանձիր, մանաւանդ երբ
կը տեսնեմ քան զիս աղքատ եղողներն
և աւելի խեղծութեամբ ապրողները .
Ես ճարտարութեամբս ու ջանքովս իմ
գործողութիւններս անանկ վիճակի մը
մէջ դրեր եմ, որ առանց մտմտուքի հան-
գիստ կարենամ ապրիլ . լաւագոյն վի-
ճակի մը փափաքելս առաջ պէտք է
ես ինձի հարցընեմ . Այդ վէճակը ար-
դէօս իմ հարողութենէս վեր չէ : — Ար-
դէօս իրեն անուշ առելս երշանիկ և առելս
առաջնի ըլլալ : || Իճակ մը ընտրելին
առաջ պէտք է ասոնք մտածել . իսկ ըն-
տրելին վերջը նոյն վիճակին պարտքերը
լաւ կերպով ու հատատութեամբ կա-
տարելու է . իմադ երթան կորաւին
մեզմէ այն գարշելի երկու ախտերը

Ծառալութիւնն ու Անհոգութիւնը . Դյու-
լութիւնը՝ որ կ'ուզէ միշտ բամբակնե-
րու մէջ պըլլուիլ և երբէք բանի մը
ձեռք չզարներ . և Ենհոգութիւնն՝ որ
ամէն բան ձգձրգելով կ'ընէ : Իան մը
որ պիափի ընենք՝ ուզելով ընենք . այն
ձին որ առանց մորակի չվազեր՝ չկրնար
ալ ասպարիզին մէջ յաղթել . և թէ որ
շունը դանդաղ շարժի՝ եղջերուն կը
փախչի :

Համոզուինք ուրեմն որ ամէն վիճա-
կի մէջ ալ կրնանք բարիք գործել : Հա-
րուստ ես . գնա առատաձեռնութեամբ
արուեստաւորներու նպաստէ , առաքի-
նիները վարձատրէ , կարօտելոց օգնէ :
|| աճառական ես . գաշնազրութեանցդ
մէջ կարգաւորեալ եղիր , վճարքիդ մէջ
հաւատարիմ , ընկերակիցներուդ հետ
առատաձեռնութեամբ վարուէ , գոր-
ծաւորներուդ ձիշդ վճարէ , վաճառա-
կցացդ օգնէ , և մի խորշիր այնպիսի աշ-
խատութեանց ձեռք զարնելէն՝ որոնց
կատարմանը համար շատ մարդիկ գոր-
ծածել հարկ կ'ըլլայ : Վարուեստաւո՞ր

Ես . ջանա որ արուեստակցայդ մէջ ընտիրներէն մէկն ըլլաս . ձեռքէդ եկածին չափ արուեստդ կատարելագործէ , առանց ականջ կախելու այնպիսեաց որ յառաջադիմել չուզելուն պատճառաւ՝ ԱՌԵՆՔ այսպիս տեսեր ենք , կ'ըսեն : Օ ինու՞ր ես . ամենեին բռնութիւն մի բանեցըներ , հասարակաց հանգըստութիւնն ու ապահովութիւնը պաշտպանէ , առանցքու և ուրիշներուն բարքն ապականելու : Դիտնական ես , օգտակար ծշմարտութիւնները տարածէ , վիշակակիցներդ սիրէ , շատերու օգնութեան հասիր , միանգամայն սավրեցընելով ամենուն միաբանութեան քաղցրութիւնը և արդարութեան զօրութիւնը . վերջապիս , ամենքնիս ալ , որ և իցէ վիշակի , սեռի և արուեստի մէջ գտնուինք , կը մանակ ուրիշներուն սիրելի ըլլալ , մեզմէ կախումն ունեցողներուն օգնել ու քաղաքակիրթ և առաքինի ըլլալ :

ԿԸ

Քաղաքակրորդիւն :

ԱՌԱՐՏԻՐՈՍՆ արդար և պարկեշտ մարդ մըն է որ բնաւ մէկու մը մազի չափ ալ մնաս ըներ . եկեղեցին կ'երթայ , օրինաց կը հնագանդի , խօսքը կը պահէ , ողորմութիւն կ'ընէ . բայց հանդերձ այսու ամենայնիւ մէկն ալ զինքը բանի մը տեղ չդներ :

Կայեցէք , ով պատանեակք . ԱՌԱՐՏԻՐՈՍՆ աղտօս ու ցնցոտած զգեստ մը կը հագնի՝ անվայել իր վիշակին ու ըստ սովորութեան նախնի դարուց . սուտ չզրուցեր , այլ անկեղծութեամբ ամեն բան պարզ պարզ քեզի կը բացատրէ . զոր օրինակ . Ան ինչ ագեղ դէմու ունիս . կամ թէ , թղորու մը առաջ , կ'ըսէ , որ տեղի չափ եր . կամ թէ՝ ՈՌՅԱԴ նուազ պէտի առանես դրու , որ աչիդ մէկը իոյր է : (Օր ունի որ զուարթ ու կանչուրուտող կ'ըլլայ . երբեմն ալ կը մաղնոտի , ու կատղած շուն մը կը դառնայ , անանկ որ զինքը բարկացած կը կարծես : ԽԱՎ

որ տեսնէ երկու հոգի մը որ պատճառաբանութեամբ իրարու հետ կը խօսին՝ իրեն հոգն ալ ըլլար . մղոն մը հեռուն կեցած հետդ կը խօսի . բան մը ըսես , լաւ մը յօրանջելէն ետքը՝ Ի՞նչ . Ի՞նչպէս ըսէր կը հարցընէ . և կամամենէն հարկաւոր կիտին խօսքդ բերնէդ կ'առնու : Խոկ ընդհակառակն թէ որ ինքը բան մը պատմէ՝ վերջը ըրերեր . հարկաւոր բառերը միտքը չեն գար՝ ու Ան մարդը . . . կ'ըսէ . անունը ինչ է . . . առ աւելին . . . : Խյօսելուն ժամանակ ուրիշին երեսն ՚ի վեր կը փչէ , կը յօրանջէ , կը զունչէ . հազարուն ու փոնգալուն ժամանակ չորս կողմն եղողները կը լուայ . թէ որ յանկարծ ոտքդ կոխնէ , կամ մէկ տեղդ ցաւցընէ , կարծես թէ մեղք կը սեպէ թողութեան ըրէ մը ըսելու . թէ որ իրեն ծառայութիւն մ' ընես՝ Ծնորհակալ էմ մ' ալ չգիտեր ըսել . երբ քեզի կը հանդիպի , ոչ Բարի լցա և ոչ Ծնորհատոր նոր տարի կը բարեմազթէ . թէ որ մէկը տեղի բարեւ ըրսես՝ կարող է ըսելու . Ի՞նչընէ մէր բարեւ . տանը մէջ ամեն տեսակ աղաղակ ու շնկոց կը փրցընէ , և եթէ մէկը իրեն իմացընէ որ դրացիներն անհանգիստ կ'ըլլան . Տան գէջէմ , կ'ըսէ : Դարձեալ բազմամարդ սեղանի վրայ կը սկսի մեռեներու , վերքերու , իր արտերուն աղբանոցին և կամ աւելի զզուելի բաներու վրայ խօսիլ . խուց մը մօնալու ժամանակ դռնէն առաջ չգար . գիրք մը կամ լրագիր մը կը կարդաս՝ կ'ուզէ ձեռքէդ առնել որպէս զի ինքն առաջ թղթատէ . նամակ մը կը կարդաս , մէկէն աչքը վրան կը տնկէ . թէ որ կառք պիտի նստիս , ամենէն աղէկ տեղը ինքը կ'առնու . տաքնալու միջոց բոլոր կրակարանը կը գոցէ . եկեղեցին կամ հասարակաց զուարծութեան տեղ եթէ նստած ըլլայ , ու քովը մէկը գայ , քիչ մը անդին չերթար որպէս զի տեղ տայ : Լնցեալ օր անձրևի ժամանակ երբ իր հովանոցը ձեռքը կ'երթար՝ դիմացը եւաւ պաշտօնատարի մը խաթօնը , որ բարի և մեծարոյ տիկին մըն էր . գլուխը ծուելով բարեւ մը տուաւ , բայց ոչ

պատեն հեռացաւ, և ոչ հովանոցը հըս
րամյուց որ խեղջը չթրջի : Ո)հէ որ խո-
հակերոցը գաւաթ մը կոտրի սարսա-
փելի շփոթութիւն մը կը հանէ . թէ
որ բազմութեան մէջ մտնէ մէկը մէ-
կալը կը հըրմըշտըկէ , որպէս զի ամե-
նէն առաջ անցնի . գալ կը խոստանայ
ու ժամերով կը սպասեցընէ . զիրք մը
փոխ կու տաս՝ ոչ երբէք կը դարձնէ .
թէ որ դուն աջ կողմը կ'ուզես երթալ,
ինքը ձախ կողմը կ'երթայ . եթէ դուն
գետը անցնինք կ'ըսես , ինքը լեռը ել-
լենք կ'ըսէ : Անցուան բարիք ընելու
մէջն ալ ոչ կերպը գիտէ և ոչ ալ շնորհք
ունի : Ո)հէպէտ և աղէկ աղէկ կոչունք-
ներ ընէ ու ընտիր գինիներ հրամցնէ՝
բարեկամները ակամայ կ'երթան , վասն
զի սեղանին ամենէն ընտիր կերակուրը
կը պակսի , որ է տանտիրոջ բաղցը ե-
րեսը : Ո)հէ որ աղքատի մը ողորմութիւն
տայ , կը սկսի քթին տակէն մրմուալ ու
ծոյլ և ձանձրացուցիչ կանչել : Ի զգա-
կաններուն բարիքը կ'ուզէ և ամէն ու-
նեցածին ժառանգ կը թողու զիրենք ,
բայց թեթև մարդավարական խօսք
մ' ալ՝ որ բան մը ճաժեր ու այնչափ ա-
խօրժելի է , չըսեր . ոչ երբէք շնորհա-
լի խօսք մը բերնէն կը լսուի , և ոչ
մէկ պղտիկ ընծայիկ մը կ'ընէ : Ծաղ-
կալից սիրուն պարտէզ մը ունի . բայց
արդեօք ազգականներէն մէկուն , կամ
Ո . Ի ստուածածնայ խորանին բնաւ
փունջ մը խաւրած ունի . արդեօք ու-
րիշներուն իր հունտերէն , կամ մեխա-
կի ու նունուֆարի սոխերէն , և կամ
ծառոց պատուաստներէն տուած ունի :

Ի զնիւ ու կանխահաս զեղձի ծառեր
ունի՝ որ եթէ զօյդ մը անոնցմէ ընծայ
խաւրէ մէկուն՝ բաւական է ինքզինքը
սիրցընել տալու համար . բայց չմտածեր
ու դեղձերը կը փայտընէ : Ի՞նգամ մը
եղբօրդւոյն պղտի կողով մը տուաւ
այն դեղձէն , բայց տալու ժամանակ փո-
խանակ շնորհալի խօսք մը զուրցելու ,
ինչպէս՝ Ուսման ջանք ըրէ . Եկեղեցոյ մէջ
ամէոդ ու լուս իւցիր . Տօրդ հնաղանդ ե-
ղիք . բասաւ . Ա՛ս սըսիկայ , վասն ոյ չէ գի-
րե ինչ ընէ :

Կթ.

Վարդակակիրթութիւն . — Վարտիրոսին
համար ասոնք յանցանք են . չէ . այլ կը
ցուցընեն թէ բաւական չէ միայն արդար
ու բարերար ըլլալը , այլ պէտք է նաև
մարդականք ալ ըլլանք , այսինքն է սիրելը
և ընկերական : Ո)վ որ Վարտիրոսին այս
պիսի անկիրթ վարմունքը կը տեսնէ՝ կը
տհաձիր , և մենք չենք ուզեր բնաւ մէ-
կու մը տհաձութիւն պատճառել : Ոյ-
բեմն ակամայ պէտք կ'ըլլայ զուրիշները
տհաձեցընել . բայց պէտք է ուրիշ ա-
տեն քաղցր վարմունքով մը անոր տուած
տհաձութիւններնուս փոխարէն մը ը-
նենք . այսպէս ահա գողագիրթութիւնը ,
այսինքն է բարեսրտութեամբ ու մե-
ծարանքով վարուիլը և հակառակէն
զգուշանալը , պարտք մը կը դառնայ :
Երջն իսկ մեր շահն ալ աս կը պահան-
ջէ որ մարդականք ըլլանք , վասն զի ամե-
նէն ընտրելագոյն կերպն է որով ուրի-
շն սիրտը դիւրաւ մեզի հետ կը կա-
պուի : Ո)եղը կը լզենք՝ վասն զի քաղ-
ցրը է :

Եթէ երջապէս , մարդավարութիւնն ու
բարեկրթութիւնը նման են կահարա-
սեաց փայլունութեանը : Փայտէ շի-
նուած հասարակ անհարթ գարան մ'ալ
նոյնպէս կը ծառայէ . չըւացուած անօ-
թի մը մէջ գրուած ապուրն ալնոյնպէս
համով է . բայց ինչ է որ տարբերու-
թիւն մը կը գնենք :

Իւել մը մանր մունր պատշաճողու-
թիւններ կան , որ ըստ գաւառաց և
ըստ ժամանակաց կը փոփոխին , և ա-
սոնք բարեկրթութիւն սովորեցնող գը-
րոց մէջ գրուած են , որոնց Ո)ԱՐԴԱ-
ՎԱՐՈՒԹԱՒՆ կ'ըսենք : Ի՞յս պատշա-
ճողութիւնները զանց առնողները կը
ցուցընեն թէ լաւ կրթութիւն առած
չեն , լաւ համարման արժանի չեն ըլ-
լար , և ուրիշներուն ականջը կը խայ-
թեն ու աշքի գէշ կ'երենան . ուրեմն
պէտք է այս պատշաճողութիւնները
պահել : Ձեր տղայութենէն սկսեալ
մայրերնիդ ձեզի կը սովորեցընէր որ ան-

շնորհք խօսքեր բերաննիդ չառնեք, գետինը փոռած չկենաք, թևերնիդ շատ չշարժեք, երկար ժամանակ աչքերնիդ տեղ մը տնկած չնայիք, ոչ շատ շուտ և ոչ ալ շատ ծանր քալեք, բարձր ձայնով չծիծաղիք, և թէ չեւուի կապակը իշուհապակ է. և ընդհակառակն այնպէս պէտք է շարժիլ որ ուրիշներուն ձանձրութիւն, արգելք ու աշխատութիւն չըլլանք. ասոնք միտքերնիդ պահեցեք, և երբ ընկերութեան մէջ կը մտնեք, նայեցեք թէ կը թեալ անձինք ինչպէս կը վարուին, ու անոնց նմանեցեք: Ես հոս Մարդակարութեան գրելչեմսւզեր, այլ Արդարութեան և բարերարութեան պարտքերուն վրայ համառօտիւ մը խօսելէս վերջը, կ'ուզեմ քանի մը խօսք ալ տաղարիշնեան պարտքերուն վրայ զրուցել, որ ուրիշներուն հետ մեծարանքով վարուիլ կը սովորեցընէ, և մեղի ալ ախորժելի բան է, և որով միայն հաճոյ և չնորհալի կ'ըլլայ ընկերական վիճակը:

Հ

Ալենցաղակարութեան Քջ: — Ե՛ուզես ուրիշներուն հետյարմարիլ, նախ և առաջ մէկդի ձգէ անտառանինը, որ զքեզ ուրիշներէն վեր կ'երեցընէ: Հարսւստ ես. գեղեցիկ ես. ազնուական ես. դիպուած մըն է. գիտուն ես. ան ալ Բայտուծոյ պարգեն է: Բայց Ճշմարիտ արդիւնքը համեստ է. ջանար փառաւորուիլ. ուրիշները գոհ ընելու համար ամենայն մեծարանք կը բանեցընէ: Քաղաքակրթութեան սքանչելի պատուեր մը տուաւ մեղի չիսուս, երբ ըստաւ. Մէջ ջանակ առաջին պատուատոր ուշը նստիլ. աւելի լաւ է որ Գայ տանտէրը և Խոջուատնի ջարնստէր են, ըսէ՞ տան նէ սորտուի, Դու ի՞նչ ունիս հոս, վար տաշուէ, ըսէլու:

Երբ պատրուտած ու ամէն տեսակ գունով ազտոտ զգեստներ հագած մարդ մը կը տեսնենք, անլուայ ու հոտած ձեռքերով, կը գանինք. բայց նոյնպէս զգուանք մը կը պատճառեն մեղի անոնք որ մաքուր հագուած սգուած ու վզեր.

նին տնկած կը քալեն. վայ թէ որ քիչ մը զգեստնուն դպչիս կամմազերնին աւրես. խեղճ մարդիկ. տերևնին շատ, խաղողնին քիչ:

Պարկեշտ մարդը իր վիճակէն վեր փառաւոր զգեստներ չշագուիր. մեծութեամբն, հարատութեամբն ու գիտութեամբը զպարծիր. իր արդեանցը վրայ չխօսիր, և ոչ իսկ ուրիշներուն գովելով կ'ուռի. բնաւ զոք չծաղրեր, այլ որշափ կարելի է կը գովէ. ոչ երբէք նամակ մը, բարե մը առանց պատասխանի կը թողու. ամենեին չպահանջեր որ ամէնքը երկայն բարակ իր և իրեն սիրելի եղած նիւթերուն վրայ խօսին, մանաւանդ թէ ուրիշներուն խօսելու նիւթ կու տայ. խօսակցութեան մէջ լրաւթեամբ գէմ չխօսիր, և ոչ իր կարծիքին վրայ կը յամառի. բարեբարոյ է ու կը գիտէ միշտ թէ որ բանն արդեօք հաճոյ է ուրիշին. փափաքնին կը գուշակէ և կը ջանայ նեղութիւն չտալ. ներողամիտ է՝ բայց ախտաւորներուն ու անզգամներուն երես չտար, զիրենք ցիայփայեր՝ այլ պակասութեանց կ'արգահատի, որոնցմէ ոչ ոք ազատ է. կը ջանայ անմեղադիր ընել երբ կարելի է. բերեսրոտութեամբ կը մեկնէ ուրիշներուն ըրածը, և առանց ներքինը դատելու արտաքնոյն միայն ուշ կը դնէ:

Պարձեալ պարկեշտը ինքզինքը նըւաստ ու արհամարհելի ըներ. ընդունայն ամօթով ուրիշներուն առջեւ ցողղողար, գիտէ որ ուրիշներն ալ վերջապէս իրեն նման մարդիկ են. խօսակցութեան մէջ թէ իրեն և թէ ուրիշին օրինաւոր մեծարանքը կը պահէ, և կը ջանայ իր կողմանէ հաճոյական կերպ մը բանեցընել. վասն զի իւրաքանչիւր ոք այնչափ կ'աժէ՝ որչափ ինքզինքը գիտէ աժեցընել:

Ոմանք իրենցմէ աւելի խեղճերու ընկերութե մէջ միայն կ'ուզեն մտնալ, որպէս զի անոնց մէջ առաջին ըլլան. այսպիսիները հետզետէ աւելի սնափառ կ'ըլլան և բնաւ չեն օգտուիր: Ով ընդհակառակն միայն մեծամեծ և հարուստ մարդկանց հետ կ'ուզէ միշտ

վարուիլ՝ շատ մահացուցումն ու տհա-
ճութիւններ կը կրէ : | Ամխորհրդիս մը-
տիկ ըրէ , ով պատանեակ . սիրէ զիտ-
նոց՝ ևս առաւել առաջինի ու քաղաքա-
կիրթ մարդկանց ընկերութիւնը . ա-
նոնցմէ միշտնոր բան կը սովորիս , իրենց
օրինակը զբեզ ՚ի բարին կը յորդորէ ,
իրենց բարեկամութիւնը զբեզ մեծա-
րոյ կ'ընէ :

ՀԱ.

| Կյոսակցութեան հէջ : — || Կրիչներուն
հետ խօսելու ժամանակ տհաճութեց
մեծ պատճառ լեզուն է : | Կանուխ վար-
ժեցուր զբեզ իմաստութեամբ կառա-
վարելու զիեզուդ , որոշ ու չափաւոր խօ-
սէ , շուտ՝ բայց ոչ գահավիժաբար , մա-
քուր՝ բայց ոչ արուեստարկեալ : | Երիշ
պատիւը շատ օգտակարութիւններ ունի ու-
ժիշ է՝ ածէ , և շատ անգամ լաւ խօսքով
մը գէշ գործք մը կը մոռցուի : | Ի հձա-
բանելու առթի մէջ քաղցրութեամբ
ու չափաւորութեամբ քու պատճառ-
ներդ ըսես , ու նայէ որ չտաքնաս . վասն
զի խօսիլը խօսել կու տայ , ու կընաս
անանկ բաներ բերնետ հանել որոնց
վրայ ետքէն ցաւիս . ուր մնաց որ միշտ
հակաճառութենէ վերջը դարձեալ ա-
մէնքը իրենց կարծիքին վրայ կեցած
կ'ըլլան . ասոր համար քեզի խորհուրդ
կու տամ որ քանի մը չափազանց որոշո-
զական կերպեր շատ ըւանեցնես . Աւ-
նասորյգ է . — Կը խաբուիս . — Կ'երաշյա-
ռորէմ . և ընդհակառակն ուրիշ այնպի-
սի կերպեր բանեցուր որ ուրիշին ան-
ձնասիրութեանը չդպչին . Ինձի է՝ եր-
նայ . . . Իմ տէար էտքով . . . Թերեւ
լու չկասիցայ :

| Ծնկեղծ ես՝ բայց չափը կ'անցնիս .
այն դառն ճշմարտութիւնը կընայիր
ծածկել . բարեկամ մը չկորսնցընելու
համար երբեմն հարկ կ'ըլլայ անուշ
թքնել ու լեզի կլլել : | Կրթոր ուրիշը կը
խօսի՝ մտիկ ըրէ , իրենց խօսքը մի ընդ-
համար ու անուշադիր մի երեար . քիչ
անգամ քու վրադ խօսէ , և զուրիշները
գոհ ըրէ իրենց վրայ խօսելով : | Ու որ

միշտ լրես՝ Փայտ մը ուրիշ փայտի մը
վրայ նատեր է , կ'ըսեն . թէ որ շատ
խօսիս , ինչպէս ըսի , անանկ բաներ
բերնետ կը հանես որ վերջը կը զդջաս :

| Տեսամբ Կիրակոսն . ինչ որ կ'ուզես
հարցուր , բան չկայ որ չգիտնայ . ամէն
բանի վրայ կը խօսի ու կ'ուզէ դատաս-
տան ընել . առանց լաւ մը խօսակցու-
թեան ինչ բանի վրայ ըլլան իմանալու
վիճուներ կու տայ , և իրմէ իմաստուն-
ներուն բերնին խօսքը կը կտրէ . այս-
պէս ըրած այլանգակ սխալներովն ամե-
նուն ծիծաղելի կ'ըլլայ , ու բան չափրիր :

| Խակ շատախօս Յովսէփը որ միշտ
մնոտի բաներ կը պատմէ , զարհութելի
լուրեր կու տայ , կամ խոշորկէկ սուտ
մը կը գլորտըկէ ու ինքզինքը մեծ զուար-
ճախօսի տեղ գրած է , անհամին մէկն է :

| Ո՞վ կընայ Ուրոսին հետ կենալ , ո-
րուն ամէն խօսակցութիւնն արուես-
տարկեալ է , և թեթև բանի մը հա-
մար երեսը կը թթուեցընէ . կամ միւս
իմաստակին հետ , որ ամէն բանի դէմ
կը խօսի :

| Հանձարաբանութիւնն ու զուարձա-
խօսութիւնը խօսակցութեան համեմքն
են . բայց վայ թէ որ սաստիկ ըլլան ,
թէ որ սիրոյ , պատուոյ ու առաքինու-
թեան դպչին , անբժշկելի վէրքեր կը
բանան : | Ի՞րով բանիւ զուարձախօսու-
թիւնը ախորժելի բան է , բայց պէտք
է որ յաճախ ըլլայ :

| Ինչու ուրիշներուն բանին կը խառ-
նուիս . քուկիններդ բաւական չե՞ն :
Ու որ տան մը մէջ լսածդ՝ ուրիշ տուն
մը երթաս պատմես , քիչ ատենէն եր-
կուքին ալ ատելի կ'ըլլաս : | Ոյսպէս ա-
հա եղաւ | Վարկոսին՝ իր սուր ու կծու
լեզուին համար : | Ի՞շտ խօսակցութեը
մէջ չարասրտութիւն մը կայ . երբ չա-
րախօսութիւն կը լսէ՝ կ'ուրախանայ .
իսկ գովեստի ժամանակ՝ կամ ակամայ
կը լսէ , կամ իր բայցերը մէջ կը խառնէ :
| Երնէն մեղք կը կաթէ ու զգեստին
տակ դաշցն ծածկած է . արտաքուստ
հազարումէկ շողոքորթութիւն կ'ընէ ,
բայց հազիւ թէ մէկը խուցէն դուրս
կ'ելլէ՝ խօսքը վրան կը դարձընէ ու շ-

ըիք չմնար որ լրսէ : Խնչ և իցէ գէշ կամանվայել դէպք մը լսէ՝ մէկէն նոյն վայրկենէն կը սկսի մէկուն մէկալին վաղել քարոզել . ինչուան բարի գործոց մէջ ալ միշտ երկրորդական վախճան մը կ'ենթաղրէ՝ պարզ չգովելու համար : Այսուած պահէ զիս չարասրախն լեզուէն ու մարդասպանին սրէն :

Խնչ ըսեմայն ողորմելիներուն որ ընկերութեանց միմուը կը դառնան և ամէն տեսակ խեղկատակութիւն կ'ընէն՝ որպէս զի ուրիշները խնտացընէն . ինչ ըսեմ այն անառակներուն ու ամբարիշտներուն որոնք անսպարկեշտ ու պիղծ բաներ կը խօսին , և կ'ուզեն սրբոց ու սրբազան բաներու վրայ ծիծաղիլ :

Այսպիսեաց հետ , ով պատանեակ , մասնակյութիւն չունենաս : Բայց ընկերութեան հաճոյ ու սիրելի ըլլալու համար՝ միշտ նոյնպէս զուարթ եղիր , խոռվեալները հաշտեցուր , երախտագէտ եղիր նաև ամենէն ոչինչ բաներու , և որուն որ կրնաս՝ սրտանց ու շուտով ծառայէ : Սած խրատներդ պահէ . երբ կը տարակուսիս թէ ինչպէս պէտք է վարուիս՝ իմաստուն և բարեսէր անձանց խորհուրդ հարցուր ու չնորհակալ եղիր . եթէ գիտես որ մէկը վիշտ մը ունի վազէ միխթարէ , եթէ մէկը մահացած կը տեսնես՝ անուշ խօսքով մը սփոփէ , լորօրինակ զգեստներ ու շարժմունքներ չունենաս . ոչ տրտնջացող և ոչ պարծենկոտ ըլլաս : Կյոսակցութեանց մէջ՝ խելացի բարեսրտութենէ մը աւելի ախորժելի բան չկայ :

Ա երջապէս , կը փափաքիմ որ քաղցրաբարոյ ըլլաս՝ բայց ոչ թէթեամիտ . ծանրաբարոյ՝ բայց ոչ պահանջող , ձիշդը բայց ոչ մնոտի ու ձանձրացուցիչ , խոհական՝ ոչ յամառ , անսպահոյմ՝ ոչ կծծի . մեծերը յարգող , հաւասարներու հետ պարկեշտ , ստորնագունից հաճոյ : Կը փափաքիմ դարձեալ որ խօսակցութիւնդ ալ գործողութեանցդ ու սրտիդ ոլէս պայծառ , ազատ , համարձակ ըլլայ , և քեզի հետ խօսողը ժամանակը պարապ անցուցած չկարծէ :

ՀԱ.

Բայց զգոյշ կեցիր . քաղաքակրթութիւնը քաղցր խօսքերու և չնորհակալութեանց շատութեանը վրայ կայացած չէ , որոնք մեր զգացմունքը չեն յայտներ՝ այլ կը կեղծեն : Ատեփանը միշտ սպրկիկ ու հագուած սգուած կը տեսնես . բերնէն մարդավարական խօսքեր ու ցուրտ չնորհակալութեան կերպէր ջրի պէս կը վազեն . ամէն վայրկեան չնորհակալ կ'ըլլայ , ամէն վայրկեան ներումն կը խնդրէ , կարծես թէ առանց քեզի չկրնար հանգիստ ըլլալ : Թէթէ մէկ տկարութիւն մը ունենաս՝ կարծես թէ քունն ացքէն կը կտրի . ամէն ըրածիդ վրայ կը զարմանայ , կը զմայիլ , անանկ որ թէ որ դեղձը յունուարի մէջ կը համնի՝ ըսես , չհամարձակիր դէմ գնելու : Ատեփանէն իրեն նմաններն համեկ' առնուն , բայց քիչ մը խելք ունեցողներն ամէնքն ալ կը խորշին :

Քաղաքակրթութիւնն ուրիշ բան ըսել չէ , եթէ ոչ մարդավարութեան , ներողամուութեան ու բարեսրտութեանցունիս յայտնել ուրիշներուն . թէ որ սրտիդ մէջ այսպիսի զգացմունքներ ունիս՝ առանց նեղութեան կը յայտնես , և բարի ու ազնուասիրտ կը համարուիս , բայց թէ որ չունիս ու կ'ուզես ձեացընել կեղծաւոր ես ու խարթեայ :

Ա արդասէր , ներողամիտ , բարեսրտ եղիր , ասոնք են ծաղիկը մսրդավարութեան : Ատրդասէր . ուրիշին յաջողութեանը վրայ ուրախացիր և թշուառութեանը վրայ տրտմէ . որչափ ձեռքէդ կու գայնայէ ուրիշին չարիք չհասցընես ու տհաճութեան պատճառ ըրլաս , այլ ջանա մանաւանդ ընկերութեան ուրախութիւնները շատցընել : Լիբողամիտ . թէթեւ նախատանաց ներէ , ուրիշին գործքերը՝ ի բարին մեկնէ , պակասութեանց արգահատէ , յիշելով որ մարդկանց մէջ կատարեալը քիչ պակասութիւն ունեցողն է . մի պահանջներ որ

ուրիշները քեզի պէս հագուին , ուտեն ,
մոածեն ու խօսին , այսպիսի անմեղ
բաներու մէջ ուրիշներուն ազատութիւ-
նը մի բռնադատեր : Բարձէսիր . մարդ-
կանց միշտ աղէկութիւնները տես . ա-

ւելի անոնց առաքինութեանցը հաւատք
ընծայէ քան ախտերուն . որով սիրէ ,
յարգէ ու կարեկից եղիր՝ պատրաստ
ըլլալով ամենայն բարիք ընելու :
Կը շարունակուի :

Աստեղք :

Ե ժամ ի ձահ խորհելոյ , ժամ սըրբանուեր ,
Ոինչ փախըստեայ՝ արփից ծոցոյն առ եզեր
Ի մըխիթար երկնից ընդ երթ արեւուն
Ո ոյսն երեկին փարի զլերամք յամր յողջոյն :
Ի փայլ յողդողդ շուրջ ըզծայրիւք եթերաց
Օ երդ վերջաւորս ի ձիգ ընդ քարշ ծիրանեաց
Ք երէ յուշիկ զհաստատութեամբ երկնից մութ ,
Ուր զփայլ իւրեանց առնուն աստեղքն ի կապոյտն :
Ենդ ոսկեհատ գունդք եւ կըզզեակք լուսալիր ,
Ոյց բիբ մտախոհ բերի ի բնուստ ի խընդիր ,
Ի մոայլ միգէն ցայտեն ի թիւր բոյլ ի բոյլ ,
Ծ զգիշերոյն հետովք փոշի ոսկեթոյր ,
Օ որս ի յետուստ երեկորին շունչն ի թիւր
Ո ըըրկատարափ ընդ ջինջն յատակ ցանէ ցիր :
Յ ակն անքըթիթ փայլեալ եւ զսդ ըլքանան .
Լ իւսք ըզծայրիւք իբր ի կըշիռ մայրեաց կան ,
Օ երդ երկնածեմթըռչուն , ոյր թեւք սըրալար
Ի հոլաթեւս կայծս արձակեն բոցավառ .
Լ իւսք ի պայծառ կոհակս ընդ օգս երկայնին ,
Օ երդ ժայռ սափիտակ՝ ջինջ ի փրրփուր ծովային .
Ի յլք պէս նրժոյգ երագասլաց ի կըրկէս ,
Յ ոլորս ի ձիգ պարզեն զիւրեանց վէտ վէտ գէս :
Ի յլք վայրահակ յեզերս ի կէս յերկնից ծիր ,
Լ իբր աչկունք բացք հային յաշխարհս այս ի նիրհ .
Ո ինչ ծածանուտ աստեղք յայերց ծագս յետին
Լ իբր առագաստք ձերմակք ընդ օդ ծածանին ,
Ո լք տար ափանց դիմեալք ի կայս հանգըստեան ,
Յ առաւոտին նըշոյլ փայլեն յիլվկիան :

Շ ողջող աստեղդդ , հրաշակերտից գերափառ ,
Լ ն լոկ գիտէ զամն եւ ըզչափ եւ զհամար .
Լ իւսք հինաւուրցք աղօտանան մեր աշաց ,
Լ նհետացան այլք ընդ շաւիդն եթերաց .
Լ յլք զերդ ծազիկ գըգուեալ ի սիւգ զեփիւոին ,
Պ արզեն ձակատ առոյգ ի գեղ զուարթագին .
Լ աւ զարեւելս երինսեալ ի փայլ նորավառ ,
Լ ըստորդեն զաշս հետամնւտս այնց ի համար :
Լ լանան յանկարծ գան յասպարէս , եւ մարդիկ
Յ ողջոյն ի նոր կոչեն անուն այնոցիկ :